Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ություն

Երևանի պետական համալսարանի

կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի

2016 թ. ապրիլի 29-ին կայացած թիվ 9 նիստի

Օրակարգում՝

- Տեղեկատվություն բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլանների հաստատման մասին:
- Հաշվետվություն մանկավարժական պրակտիկայի վերաբերյալ /զեկուցող՝ դեկանի տեղակալ՝ Կ.Ա.Ղազարյան/:
- I, II կուրսերի ուսանողների ուսումնական պրակտիկայի և III կուրսի արտադրական պրակտիկայի անցկացման նախապատրաստական աշխատանքների քննարկում /զեկուցող՝ դեկանի տեղակալ՝ Կ.Ա.Ղազարյան/ :
- Ուսումնական ձեռնարկի /գրքի/ տպագրման երաշխավորման հարցը
- Ընթացիկ հարցեր
- Շնորհավորանքներ Ա.Հ.Թռչունյանին

Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի 40 անդամներից նիստին ներկա էին 37-ը:

- **Տեղեկատվություն բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլանների հաստատման մասին**

ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի մեթոդական խորհրդի անդամ Ա.Ֆ.Կարապետյանի հաղորդումը ուսումնական և աշխատանքային պլանների հաստատման վերաբերյալ: Ա.Կարապետյանը նշեց, որ հաստատվել են 2016-2020թթ. «Կենսաբանություն», «Կենսաքիմիա» և «Կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա» մասնագիտությունների և «Մանրէաբանություն և կենսատեխնոլոգիա», «Գենետիկա և բջջաբանություն», «Կենսաբազմազանության ուսումնասիրում և պահպանում /բույսեր և սնկեր/», « Կենսաբազմազանության ուսումնասիրում և պահպանում /կենդանիներ/», «Կենսաֆիզիկա», «Կենսաինֆորմատիկա» և «Ընդհանուր և բժշկական կենսաքիմիա» մասնագիտացումների ուսումնական պլանները:

- Հաշվետվություն մանկավարժական պրակտիկայի, I, II կուրսերի ուսանողների ուսումնական պրակտիկաների և III կուրսի արտադրական պրակտիկայի անցկացման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ /զեկուցող՝ դեկանի տեղակալ՝ Կ.Ա.Ղազարյան/

ԼՍԵՑԻՆ՝ դեկանի տեղակալ Կ.Ա.Ղազարյանի հաշվետվությունը մանկավարժական պրակտիկայի, I, II կուրսերի ուսանողների ուսումնական պրակտիկայի և III կուրսի արտադրական պրակտիկայի անցկացման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ: Կ.Ղազարյանը նշեց, որ մանկավարժական պրակտիկան անց է կացվել համաձայն ԵՊՀ կանոնակարգի: Ստացվել են դպրոցների տնօրենների դրական կարծիքը ուսանողների դասավադման վերաբերյալ: Արդեն սկսվել են ուսումնական և արտադրական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքները:

- **Ուսումնական ձեռնարկի /գրքի/ տպագրման երաշխավորման հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի հայցորդ Ն.Վ.Գրիգորյանի և պրոֆեսոր Ս.Գ.Նանագյուլյանի ներկայացրած «Wild flowers and fungi in Republic of Armenia /Հայաստանի Հանրապետության վայրի ծաղիկները և սնկերը/» գրքի հրատարակման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ՝ պրոֆ. Ս.Գ.Նանագյուլյանը

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել հրատարակման:

ԼՍԵՑԻՆ՝ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի դոցենտ, կենսաբանական գիտությունների թեկնածու Լուսինե Ռաֆիկի Համբարյանի ՝ Գ.00.11 «էկոլոգիա» մասնագիտությամբ, որպես թեկնածուական ատենախոսությունների գիտական ղեկավար հանդես գալու հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչ՝ Ն.Ա.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը՝ միջնորդել ԲՈՀ-ի առջև Լ.Ռ.Համբարյանին՝ Գ.00.11 «էկոլոգիա» մասնագիտությամբ, որպես թեկնածուական ատենախոսությունների գիտական ղեկավար հանդես գալու թույլտվություն ստանալու համար:

Շնորհավորանքներ Ա.Հ.Թռչունյանին

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ է.Ս.Գևորգյանը, կենսաֆիզիկայի ամբիոնի պատվավոր վարիչ՝ պրոֆեսոր Գ.Հ.Փանոսյանը, բուսաբանության և սնկաբանության ամբիոնի պատվավոր վարիչ, ակադեմիկոս Լ.Լ.Օսիպյանը, մանրէաբանության և մանրէների ու բույսերի կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ Մ.Թ.Պետրոսյանը, կենսաքիմիայի ամբիոնի դոցենտ Մ.Հ.Խաչատրյանը, «Ընդհանուր կենսաբանության» ինստիտուտի փոխտնօրեն Կ.Ա.Թռչունյանը, կ.գ.թ. Ա.Մարգարյանը: Ելույթ ունեցողները շնորհավորեցին մանրէաբանության և մանրէների ու բույսերի կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Արմեն Համբարձումի Թռչունյանին 60-ամյա հոբելյանի և 35-ամյա գիտական, մանկավարժական և հասարակական գործունեության կապակցությամբ :

Դեկան է.Ս.Գևորգյանն ընթերցեց կենսաբանության ֆակուլտետի շնորհավորական ուղերձը պրոֆեսոր Ա.Հ.Թռչունյանին: Նա նշեց, որ համալսարանում ուսանելիս, լինելով անվանական կրթաթոշակառու և գերազանցության դիպլոմով ավարտելով համալսարանի կենսաֆիզիկայի բաժինը, այնուհետև նաև կենսաֆիզիկայի ամբիոնում ասպիրանտուրան, Ա.Հ.Թռչունյանը իր հետագա գործունեությունն անշեղորեն կապեց ԵՊՀ-ի հետ, կենսաբանության ֆակուլտետի հետ : Ուշագարավ է, որ հետագայում նույնիսկ զբաղեցնելով գիտակազմակերպական կարևոր պաշտոններ հալալսարանից դուրս, նա երբեք չխզեց այդ կապը: Հետաքրքիր և արդիական խնդիրների շուրջ գիտական հեազոտությունների արդյունքները, բազմաթիվ միջազգային գիտաժողովներում զեկույցները Ա.Հ.Թռչունյանին բերել են իրավամբ միջազգային ճանաչում : Նա դասախոսություններով հանդես է եկել ԱՄՆ, Կանադայի և Եվրոպական երկրների մոտ 30 համալսարաններում՝ բարձր պահելով ԵՊՀ հեղինակությունը: Նրա չափազանց արգասաբեր գործունեության ապացույցն ավելի քան 550 գիտական

աշխատություններն են : Ա.Հ.Թռչունյանն արժանացել է բազմաթիվ միջազգային հավաստագրերի, բնագիտության բնագավառում ՀՀ նախագահի մրցանակի, ջրածնային էներգետիկայի ոլորտում Ակիրա Միցուիի անվան և այլ միջազգային գիտական մրցանակների, պարգևարվել է ԵՊՀ ոսկե մեդալով, անվանի կենսաբանների մեդալով, ցուցաբերած գիտական արդյունքներով ճանաչվել է վերջին տարիների արդյունավետ գիտաշխատող, պարգևարվել է ԱՊՀ Գործկոմի պատվոգրով, ՀՀ ԿԳՆ ոսկե հուշամեդալով, Մարշալ Բաղրամյանի մեդալով:

Ելույթ ունեցողները նշեցին, որ իր գիտամանկավարժական բեղուն գործունեության ավելի քան երեք տասնամյակների ընթացքում պրոգեսոր Ա.Հ.Թռչունյանը նշանակալից ավանդ ունի Հայաստանում գիտության, մասնավորապես կենսաթաղանթների կենսաֆիզիկայի, կենսաէներգետիկայի, մանրէների կենսատեխնոլոգիայի, կենսաջրածնի արտադրության տեխնոլոգիայի զարգացման գործում, ինչպես նաև բարձրորակ գիտամանկավարժական կադրերի պատրաստման ասպարեզում:

Շնորհավորական ուղերձներ ընթերցեցին նաև դոցենտներ Մ.Թ.Պետրոսյանը և Մ.Հ.Խաչատրյանը:

Այնուհետև շնորհակալական խոսքով հանդես եկավ պրոֆ. Ա.Հ.Թռչունյանը: Տեսանյութի միջոցով նա ներկայացրեց հետքրքիր դրվագներ իր գործունեության վերաբերյալ:

Գիտական խորհրդի նախագահ՝
ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆ. Է.Ս.Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ դոցենտ Ա.Ֆ.Կարապետյան